«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«31» հոկտեմբերի 2014թ.

Հաստատում եմ
Գնումների աջակցման կենտրոնի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
_____ Հ. Թունյան

Ն ԳԲԽ 36/14 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. Ն 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Մեծ Հիմք» Ա/Կ-ի 15.10.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Մեծ Հիմք» Ա/Կ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 15.10.2014թ. ներկայացրած բողոքով «Մեծ Հիմք» Ա/Կ-ն (այսուհետ նաև՝ Ա/Կ) հայտնել է, որ ««ՔԵՆԴԼ» Սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու)

կողմից հայտարարված «ՔԵՆԴԼ-ՊԸԱՇՁԲ-14/09» ծածկագրով պարզեցված ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հայտերի բացման նիստը կայացել է 09.10.2014թ.: Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել երեք կազմակերպություններ, որոնք առաջարկել են պայմանագիրը կատարել հետևյալ գների համաձայն.

1. «Մեծ Հիմք» Ա/Կ-ն առաջարկել է 5.641.800 (հինգ միլիոն վեց հարյուր քառասունմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի,

2. «Սասունասար» ՍՊԸ-ն՝ 6.808.000 (վեց միլիոն ութ հարյուր ութ հազար) ՀՀ դրամ՝ առաց ԱԱՀ-ի,

3. «ԱրսԵՎ» ՍՊԸ-ն՝ 7.092.895 (յոթ միլիոն իննսուներկու հազար ութ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 2014թ. հոկտեմբերի 9-ի թիվ 26 և հոկտեմբերի 10-ի թիվ 27 արձանագրությունների համաձայն՝ «Մեծ ՀԻմք» Ա/Կ-ի ներկայացրած հայտը գնահատվել է անբավարար՝ հրավերով իբր պահանջված հավելվածները՝ 4.1-ը, 5.1-ը և 6.1-ը, չներկայացնելու պատճառաբանությամբ, իսկ մյուս մասնակիցների մոտ առկա են եղել թվաբանական թերություններ:

Ա/Կ-ն հայտնել է, որ վերը նշված արձանագրությունները ստացել են 2014 թվականի հոկտեմբերի 10-ին էլեկտրոնային փոստի միջոցով:

Արձանագրությամբ հանձնաժողովը որոշել է, որ երեք մասնակիցներից որևէ մեկի հայտը չի համապատասխանել հրավերի պահանջներին և այդ հիմքով «ՔԵՆԴԼ-ՊԸԱՇՁԲ-14/09» ծածկագրով պարզեցված ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

Բողոքաբերը գտնում է, որ «Մեծ Հիմք» Ա/Կ-ի հայտը մերժելու վերաբերյալ Պատվիրատուի պատճառաբանություններն անհիմն են: Ըստ Ա/Կ-ի, Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, քանի որ հրավերի N 5.1 հավելվածում պետք է նշված լինեին պայմանագրի կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցների տվյալները, այնինչ հրավերով որևէ տեխնիկական միջոցի պահանջ ներկայացված չի եղել, այսինքն՝ Ա/Կ-ի հայտը մերժվել է հրավերով չնախատեսված (դատարկ) կետը չլրացնելու հիմքով, իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.10.2014թ. N 27 արձանագրությամբ նշված Հրավերի

հավելված 4.1-ով և 6.1-ով նախատեսված շահույթը «Մեծ Հիմք» Ա/Կ-ի կողմից չներկայացնելու վերաբերյալ հայտնել է, որ Ա/Կ-ն ինքն է որոշում շահույթի քանակի, շահույթի լինելու կամ չլինելու վերաբերյալ:

Բողոքաբերը 24.10.2014թ. Կենտրոնին ներկայացրել է իր 15.10.2014թ. բողոքի պահանջի հստակեցում, որով խնդրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դադարեցնել «ՔԵՆԴԼ-ՊԸԱՇՁԲ-14/09» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2014թ. N 26 արձանագրության 3-րդ կետը՝ «Մեծ Հիմք» Ա/Կ-ի հայտով հրավերի N 5.1 հավելվածը չներկայացնելու մասով, 10.10.2014թ. N 27 արձանագրության 1.2 կետը և գնահատող հանձնաժողովի 10.10.2014թ. կայացրած թիվ 14/21 որոշման «ա» կետը՝ «Մեծ Հիմք» Ա/Կ-ի կողմից ներկայացրած հայտը հրավերի պայմաններին չհամապատասխանելու մասով, և նույն որոշման «բ» կետը:

2. ««ՔԵՆԴԼ» Սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

««ՔԵՆԴԼ» Սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամը 22.10.2014թ. N Ե-ՎՑ-66 գրությամբ Ա/Կ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ Կենտրոնին հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու Հրավերի տեքստում Պատվիրատուի կողմից կցվել է Ցանկ (էջ 34)՝ գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի: Ա/Կ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրել է հայտարարություն (հավելված 3.3), որ ունի անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, սակայն չի ներկայացրել այդ տեխնիկական միջոցների մասին տեղեկանքը՝ հավելված 5.1-ը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Պատվիրատուն նշել է նաև, որ Ա/Կ-ի ներկայացրած հավելված 4.1-ում (աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվ) բացակայում է շահույթը, մինչդեռ հրավերի հավելված 4.1-ով (ծավալաթերթ-նախահաշվի լրացման օրինակ) և

կնքվելիք պայմանագրի նախագծին կից հավելված 6.1-ով (տվյալ աշխատանքների կատարման տեխնիկական առաջադրանք՝ ծավալաթերթ-նախահաշիվ) պահանջվել է ներկայացնել Կապալառուի շահույթը: Արդյունքում, տվյալ մասնակցի գնի առաջարկը մրցունակության հավասար պայմաններ չի ապահովել մյուս մասնակիցների համար և խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջները:

4. ԳԲԽ-36/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Մեծ Հիմք» Ա/Կ-ի 15.10.2014թ. ներկայացրած բողոքը, ««ՔԵՆԴԼ» Սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի կողմից Կենտրոնին ներկայացված 22.10.2014թ. թիվ Ե-ՎՑ-66 գրությունը և կից փաստաթղթերը, Ա/Կ-ի 24.10.2014թ. ներկայացրած բողոքի պահանջի հստակեցման վերաբերյալ գրությունը, «ՔԵՆԴԼ-ՊԸԱՇՁԲ-14/09» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2014թ. N 26 և 10.10.2014թ. N 27 արձանագրությունները, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին 10.10.2014թ. N 14/21 որոշումը, հայտնում է հետևյալը.

1. ««ՔԵՆԴԼ» Սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի կողմից տանիքի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՔԵՆԴԼ-ՊԸԱՇՁԲ-14/09» ծածկագրով պարզեցված ընթացակարգ, որին մասնակցել են «Մեծ Հիմք» Ա/Կ-ն, «Սասունասար» ՍՊԸ-ն և «ԱրսԵՎ» ՍՊԸ-ն:

2. Պատվիրատուի կողմից Հրավերին կից նախատեսվել է Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկ, որի 5.3 համարով նշված է՝ հայտարարություն՝ տեխնիկական միջոցների մասին (հավելված 3.3), իսկ նույն ցանկի 10-րդ համարով նշված է՝ տեղեկանք տեխնիկական միջոցների (սարքերի, սարքավորումների) մասին (հավելված N 5.1):

3. «Մեծ Հիմք» Ա/Կ-ն «ՔԵՆԴԼ-ՊԸԱՇՁԲ-14/09» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով՝ Հրավերի N 3.3 հավելվածով, ներկայացրել է տեխնիկական միջոցների մասին հայտարարություն, որով հայտնել և հավաստել է, որ կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և այդ տեխնիկական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

4. Ընթացակարգի Հրավերով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չեն սահմանվել կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցները:

5. «Մեծ Հիմք» Ա/Կ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտով չի ներկայացրել Հրավերի N 5.1 հավելվածը՝ տեխնիկական միջոցների (սարքեր, սարքավորումների) մասին տեղեկանքը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.10.2014թ. ժամը 12:00-ին կայացած հայտերի բացման նիստի N 26 արձանագրության 3-րդ կետով՝ բացված ծրարներում պարզեցված ընթացակարգի Հրավերով նախատեսված փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը Հրավերով սահմանված պահանջների վերաբերյալ, «Մեծ Հիմք» Ա/Կ-ի մասով որոշում է կայացրել, որ Ա/Կ-ի հայտում N 5.1 հավելվածը ներկայացված չէ (Հրավերով սահմանված է մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի Ցանկ՝ տես Հրավերի մաս II, էջ 34, տող 10):

7. Պատվիրատուի կողմից Ընթացակարգի Հրավերով նախատեսված հավելված N 4.1 ծավալաթերթ-նախահաշվի լրացման օրինակի աշխատանքների և ծախսերի անվանումները սյունակում նախատեսվել է նշել կնքվելիք պայմանագրի կատարման արդյունքում ստացված շահույթը, սակայն, Ա/Կ-ի կողմից ներկայացված հավելվածում շահույթը չի նշվել:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.10.2014թ. ժամը 12:00-ին կայացած հայտերի գնահատման նիստի N 27 արձանագրության 1.2 կետով արձանագրվել է. ««Մեծ Հիմք» Ա/Կ-ի հայտի ծավալաթերթ-նախահաշվում (հավելված

4.1) բացակայում է շահույթը (Հրավերի հավելված N 4.1, էջ 30 և հավ. N 6.1, էջ 42-ում շահույթը նախատեսված է)»:

Հիմք ընդունելով այն, որ հայտով ներկայացված չէ Հրավերի հավելված N 5.1-ը, գնահատող հանձնաժողովն արձանագրության վերոնշյալ կետով որոշում է կայացրել, որ հայտը չի համապատասխանում Հրավերի պայմաններին և Ա/Կ-ի հայտը մերժել է:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.10.2014թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 27 արձանագրությամբ կայացրել է N 14/21 որոշումը, համաձայն որի՝

ա) 3 հայտերից ոչ մեկը չի համապատասխանում Հրավերի պայմաններին,

բ) Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն:

5. ԳԲԽ-36/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող տեխնիկական միջոցներ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 82-րդ կետի համաձայն՝ մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

«1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցն իր հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) եթե հրավերով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները»:

Հրավերի 1-ին մասի 2.3-րդ կետի 3-րդ ենթակետի 2-րդ կետով սահմանվել է, որ մասնակցի որակավորումը «Տեխնիկական միջոցներ» չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն մասով նախատեսված պահանջները, սակայն նույն կետով սահմանված պայմանագրի կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցներին վերաբերող տեխնիկական միջոցի անվանումը, տիպը և պահանջվող քանակը սյունակներում Պատվիրատուի կողմից չեն սահմանվել համապատասխան պահանջներ, այն է՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցի անվանումը, տիպը և պահանջվող քանակը:

Նկատի ունենալով, որ Հրավերով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չեն սահմանվել պայմանագրի կատարման համար պահանջվող համապատասխան տեխնիկական միջոցները, հետևաբար՝ դրանց վերաբերյալ տվյալներ չներկայացնելու պայմաններում մասնակցի ներկայացրած հայտը չէր կարող գնահատվել որպես Հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող, քանի որ Կարգի 82-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, տեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացնելու պարտավորությունն առաջանում է միայն այն դեպքում, երբ նման պահանջը սահմանված է տվյալ Ընթացակարգի Հրավերով, ինչը Հրավերի 1-ին մասի 2.3-րդ կետի 3-րդ ենթակետի 2-րդ կետով սահմանված չի եղել: Այսինքն՝ Ա/Կ-ի հայտը համապատասխանել է Հրավերով նախատեսված պայմաններին:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի Հրավերի N 4.1 հավելվածով նախատեսված ծավալաթերթ-նախահաշվում Ա/Կ-ի կողմից շահույթը չնշելուն, ապա հայտնում ենք, որ վերոհիշյալ հանգամանքը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի դիտվել որպես Ա/Կ-ի ներկայացրած հայտը մերժելու հիմք: Մասնավորապես, «Մեծ Հիմք» Ա/Կ-ի հայտը, համաձայն գնահատող հանձնաժողովի կողմից 10.10.2014թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 27 արձանագրության 1.2 կետի, մերժվել է՝ հիմք ընդունելով Ա/Կ-ի կողմից հայտով Հրավերի հավելված N 5.1-ը չներկայացնելը: Միաժամանակ, գտնում ենք, որ շահույթ նախատեսելը Ա/Կ-ի իրավունքն է:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Ա/Կ-ի ներկայացրած հայտը Հրավերի հավելված N 5.1-ը չներկայացնելու հիմքով մերժումն անհիմն է և առաջարկում ենք «Մեծ Հիմք» Ա/Կ-ի 15.10.2014թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել «ՔԵՆԴԼ-ՊԸԱՇՁԲ-14/09» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2014թ. N 26 արձանագրության 3-րդ կետը՝ «Մեծ Հիմք» Ա/Կ-ին վերաբերող մասով, 10.10.2014թ. N 27 արձանագրության 1.2 կետը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի 10.10.2014թ. կայացրած N 14/21 որոշման «ա» կետը՝ «Մեծ Հիմք» Ա/Կ-ի ներկայացրած հայտը Հրավերի պայմաններին չհամապատասխանելու մասով, և նույն որոշման «բ» կետը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-36/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան